ՄԱՆԿԱՆՑ

ՀԱՆԳԻՍ ԱԶԳԱՅԻՆ

Համոյ իւրաքանչիւր շրջանը 32 օրինակ է։
Խորագրութեան տեղն է Պօլիս Շէրիֆ վաչա խան թիւ 9։
Դուրս երթալիք փոստային ծախքը առնողին վրայ է։

Շրջանին գինը կէս Օսմ. ոսկի 50
Մէկ թիւը դահեկան արծաթ 1
Ծանուցման տողը 3
Անվճար նամակ չընդունուիր։

Թիւ 736 ԺԲ ՏԱՐՒ ՇՐՋԱՆ ԺԵ. 1880 ՇԱԲԱԹ 30 ՕԳՈՍՏՈՍ

ԱԶԳԻՆ ՄԷՆԱՄԵՆՆԵՐԸ

(Շար. տես թիւ 735)

Գ Գ. Գուշնոփ. — կալուածատէր, դրամատէր և վրամբանքուլիասէր միջին կարգի հարուստ ոսկերիչ մը։

Այս հին աշխարհին մարդը վարժապետ կամ վարդապետ չըլլալու համար ուսման եւ կրթութեան վրայ գաղափար և փափաք չունենալուն պէս, իր զաւկին կրթութեանն ալ անհոգ գտնուելով, իրեն պէս ոգորմելի վիճակի մը մէջ դրած է։

Եթէ մէկը իրեն երթայ ցաւը յայտնելով իրմէն օգնութիւն մը խնդրելու, ինքը անկէ աւելի լալով ու ողբալով, մարդուն խօսքը տակաւին բերանն իջեր, ետ կ'դարձունէ։

Եթէ աղգային դպրոցի մը կամ հիւանդանոցի և կամ բարեգործական գործի մը համար նպաստ մը ուղուի, հազարումէկ առարկութիւններ հանելով փախուստի ճանբայ մը կ'գտնէ։

Առջի ամենէն մեծերիմ բարեկամը և խորհրդակիցը՝ Իզմիրլի օղլուն է, զոր ամեն իրիկուն անպատճառ տեսնելու է, քանի մը գուաթ կենճելով իր մէկ քանի բարեկամացը հետ Պիլքօնթֆիլտի ու կլատսթօնի քաղաքական նութիւնները քննադատելու։

Աշխարհիս վրայ ամենէն լաւ գիտցած ու ճանչցած բան մ'ունի նէ, այն ալ սա է թէ՝ օղլին տիւզը հերուանց տեսնելուն պէս, դեռ չ'խմած՝ աղէկ է մի՝ գէշ է մի՝ խմկին կը հասկնայ։

Տարին անգամ մը Ասուանճաճնի տաղաւարին Թէքիրտաղ ուխտի կերթայ ու վերադարձին բանիրէ ձին մը կ'բերէ, Թէքիրտաղ գացած ճակճ ըլլալը ապացուցանելու համար։

Տնտեսագիտութեան կողմէն ալ շատ յառաջադէմ է. բանիլճանին գինը հաշուի վը-

րայ ա՛կարկուԹիւն կընէ ու մինակ 10 հատ կատէ, առնելէն ետքն ալ 40 հոգիի կ'ցուցընէ «իրեք ու կէս փարայի եկաւ, աղէկ չմ՛առնր» ըսելով, և մինչև որ հինգ հոգի Ժան ըլլալուն վկայուԹիւն չըտան նէ՝ գիշերը քունը չտանիր։

Գ. ԵՂԲԱՐ. Գ—ղէ—ը — Ձափաւոր հաղըստուԹեան տէր պարկեշտ հարազատներ, որոց բնիկ հայրենեաց սահմանը և գործելու ասպարէզը նեղ գալով, Պոլիս եկած և իրենց աշխատուԹեամբը օր ըստ օրէ յառաջանալու վրայ են։

Ամենքն ալ զատ զատ պատուաւոր ընտանիք կազմելով, իրենց գովելի վարքովը, բարքովը ու գործունէուԹեամբը բարի օրինակ մը կ'հանդիսանան իրենց զաւակաց։

Ազգային յառաջդիմական ղազմանց եւ ուսումնասիրուԹեան մասին ուրիշ տղաքէր նէրքեւ չկան մնար, տղայքին նպատակ մասնակցուԹենէ ուրիշ շատերուն պէս չեն փախչիր, եԹէ գիտցուԹեան արժանի կետ մը կայ նէ՝ այն ալ փոքրիկ գումարով լսօսիլ բըլնաւ չսիրելնին է։

Ներմեան սրբազան վանէն հեռագրաւ կը Ժանուցանէ ԹԷ Աշայիր կոչուած քիւրտերը Հէքեարիի նահանգին մէջ հայաբնակ 13 գիւղերու վրայ յարձակելով, գիւղացւոց բոլոր ինչքերն յափշտակեր են, այնպէս որ նոյն իսկ ոսկեղջի մանաւանդ կողմանէ վարուցանի համար տրուած արկանները անգամ յափշտակեր ու փախեր են, գիւղացիներն յուսահատուԹեան և թշուառուԹեան մէջ Թողլով։

Այս դէպքը տեղական կառավարուԹեան բողոքելով, կառավարուԹիւնն ալ պատասխաներ է ԹԷ այդ մարդիկը զսպելու չափ բանական զօրք չունենալուն համար բան մ՛ալ չկրնալ ընել։

Շաւօք սրտի պէրուԹէն մեզ կ'իմացնեն ԹԷ երուսաղէմայ Ա.մեն. Եսայի սրբազան պատրիարք Հայրը հիւանդուԹեան մը ենԹարկուելով, վիճակը Ժանրացեր է և բժշկաց խորհըրդովը պէրուԹ կ'երԹ է դարմանի համար։

Էնկիւրիի առաջնորդական տեղապահ Ռուսճուքլեան Գեր. Գէորգ վարդապետ, անձնական վատառողջուԹիւնը դարմանելու համար անյետաձգելի մայրաքաղաքս դարձաւ։

Այս հինգշաբԹի օր ԹէՀլէտ Քաղաքքան ժողովը նիստ ընել որոշած էր ի Ղալաթիա, իսկ ժողովականներէն Գըճճեան Գէորգ էֆէնտիէն զատ ուրիշ մարդ չգտնուելուն համար, նիստը չկրցաւ գումարուիլ։

Նոյն օրն Ա.տենապետաց դիւանը ի Ղալաթիա գումարուելով ընդհ. ժողովոյ նիստը յառաջիկայ ուրբաԹ օրուան Թողուլ որոշեց։

ՕրԹոդիւղի մէջ կազմուած Հայուհեաց Դպրոցասէր ընկերուԹիւնը, որոյ նպատակն է ազգային դաստիարակուԹեան Ժառանգը համար արժանաւոր վարժուհիներ պատրաստել, խնդրած ըլլալով Ամեն. Ս. Պատրիարքէն որ ընկերուԹեան նախագահուԹիւնն ընդունիլ բարեհաճի, Ս. Պատրիարքն ալ հակիրճ և ըղգայուն նամակաւ մը հաճեր է յայտնել իւր հաւանուԹիւնը։

Վերոյհիշեալ ընկերուԹեան նպատակին գործադրուԹեանը վրայօք մեզ ուղղեալ մինամակն, ինչպէս նաև Ամեն. Ս. Պատրիարք հօր գրած հաւանուԹեան գիրն, տեղւոյ անձկուԹեան պատճառաւ յառաջիկայ ԹերԹերնուս Թողուլ հարկադրուելով, այսօր կ'ըսեմք միայն ԹԷ այսպիսի ազգասէր և վսեմ նախագահ մը ստանալու վստաքն ու պարծանքը բաւական մեծ քաջալերուԹիւն մն է յիշեալ ընկերու-

—Գիւղերնիդ չատ ագէկ է, բայց մէջի մարդիկը բոլորն ալ խե՛նդ են ինչ են.

—Ներեցէք, չեմ ընդունիր գիւղացոց ը-նած այդ անպատուութիւնդ.

—Կուզես ընդունէ կուզես մ'ընդունիր, ես վճիռը տուի դնաց։

—Ի՞նչ պատճառաւ.

—Ի՞նչ պատճառաւ պիտի ըլլայ, հոն դացինք, որո՛ւ հարցուցինք նէ ժամացոյցը՝ ո-րը կն է ըսաւ, որը ՝ն է, միւսը 6ը է, ես ալ դեռ ատեն ունինք ըսելով անհոգ գանուեցայ, մէկ մ'ալ վերջին թրէնը չմեկնի՛ մը, յանկ և հեծութեամբ գիշերն հոն անցընելու ստիպուեցայ, ետքէն իմացայ որ ատոնք ալա ֆրանկա ժամացոյց կ'գործածեն եղեր.

—Անիկա երկաթուղիին համար է որ բը-նակիչք թրէնին ժամանակը չշփոթեն.

—Որու համար կուզէ նէ ըլլայ, ի՛նչ ը-նեմ որ ես իմ ժամանակս կորսնցնելով խեղճ ա-նիծուեցայ մինչև առաւօտ։

* * *

Անցեալ օր երկու ընկեր Պզտիկ նոր խա-նի սանդուխէն վեր եկած ատեննին, մէկը իր միւս ընկերոջը կըսէր,

—Աս ի՛նչ սարսափելի ոչ սանդուխ է, ձեր մի արասչէ մարդ վար իյնալու ըլլայ նէ՝ մէկ վայրկեանի մէջ գործը կ'լմննայ.

—Իրաւ անանկ, հարուստ ու ազահ հո-րեղբայր մը ունիմ, որ նոյնիսկ կլաճ է, ե-րանի՛ թէ աս խանը նստէր։

* * *

Մարդուն մէկը գողութիւն մընելով տի-րոջը քովէն կ'վռնտուի։

Մարդը քահանային երթալով գողութիւ-նը կը խոստովանի, և դրուած ապաշխարանքը քաշելէն ետքը, ներում թողութիւն կ'ստանայ, և վերջէն կրկին իր առջի տերոջը կ'դիմէ խընդ-րելու որ նորէն գինքը իր քովը առնու,

—Չեմ կրնար առնել, կը պատասխանէ տէրը.

—Իրաւունք ունիք, յանցանք մը գոր-ծած եմ, բայց Աստուած ներեց ինձի, դուք ինչո՞ւ չէք ներեր, ես անոր ապաշխարանքը քաշեցի.

—Անանկ բաներ կայ որ Աստուած կ'նե-րէ բայց մարդս չներեր, դուն քու գողու-թեանդ համար թողութիւն առեր ես, իրաւ, բայց ես գիտութեամբ գող մէկը կրկին ան-գամ քովս չեմ կրնար առնել։

* * *

Գողութեան հեղինակը գանելու նոր հը-նարք մ'ալ։

Տեղէ մը բան մը գողցուելով, կորսնցն տէրը նոյն պահուն հոն գանուողներուն ամե-քն ալ կ'հարցաքննէ բայց գոհացուցիչ խոս-տովանութիւն մը չկարենալ առնելով հետևեալ միջոցը կ'մտածէ.

—Սանկ ամենքնիդ ալ կարգաւ շարուե-ցէք կըսէ։

Ամենքն ալ կարգաւ կ'շարուին, և զօրաց անցահանդէսը մ'ընել տալու պէս՝ կ'հրամայէ որ կարգաւ առջեւէն անցնին։

Անցահանդէսը կատարուած ատեն՝ կո-րսնցուած տէրը յանկարծ կ'պոռայ,

—Գողին գէսը կ'այրի կ'ը.

Բուն գողը ինքնաբերաբար ձեռքը գըլ-խուն տանելով գէսը կ'բռնէ,

Ասոր վրայ անմիջապէս գողին ո՛վ ըլլալը կ'յայտնուի։

* * *

Միւսիւ Վէնսան, Զուբ-զուբլարա կիթ-աի՞ն մի, այգըրը մեհան խոյօրլար, գըլյաք հերիֆլեր իմիշ.

—Լվվէթ, չօք գըլյաք, պու գըլյաղլըբ-տա էկէր պիր ապ տահա Սատմպօլտա գալա-լար եօ՛ղ մու, փիսցատա պիր փարա պրաք-մայտճաքլար, ֆագաթի սիղ կիտիպ սէյր իմ-տինի՛ղ մի.

—Նէ՛ սէյիր իտէճէյիմ պէնիմ տէրտիմ եօ՛ղ մու, ծնլարը՛ մը մէրադ իտէճէյիմ.

—Սմա սէյիր օլընտճաք չէյ, իւսթ իւս-թէ 40 քիլի տուրույօրլար ըմըշ, տէյօրլար.

—Նէմի՛ լազըմ, նէ Թաւրն չէքէրի՛ նէ արապըն հիւղիւ։

ՍԸԿԷ ՆԸԿԷ

Փառասիրութիւնը ներկայն ապագային կ'զոհէ, հեշտախտութիւնը ապագայն ներկային կ'զոհէ, բայց նախանձը, ագահութիւնն և ուրիշ կիրքերը կ'թունաւորեն ներկայն եւ ապագայն։

* * *

Ծուլութիւնն ու անգործութիւնը թշուառութեան կարապետներն են։

* * *

Անթիւ մարդիկ այնպիսի վիճակներու մէջ են, զորս իրաւունք ունինք չսիրելու։

* * *

Մարդոց մեծ մասը իր կեանց մէկ մասը ըայլս թշուառացնելու կ'գործածէ։

* * *

Ամեն բան մեծ է պաշտպանութեան եւ համարման տաճարին մէջ, բայց ի դուներէն, որք այնչափ ցած են՝ որոյմէ հարկ է սողալով ներս մտնել։

* * *

Հպարտ մարդն իր անձն ուրիշներէն վեր չպիտի կարծէր եթէ պնակալէզ չողոքորթներ չունենար։

* * *

Մարդ կ'սիրէ կատարեալ համարում վայելել, բայց չըզիր որ սուղ արժէ.

* * *

Գիտութիւնը որ կ'ուսուցանէ և այն բժշկութիւնը որ կը բուժէ՝ բարի են անտարակոյս, բայց այն գիտութիւնը որ կը խաբէ և այն բժշկութիւնն որ կը սպաննէ՝ յոռի են։

* * *

Վշտահար մարդու մ'ամենէն քաղցր սիփոփանքն է իր անմեղութեան մտածումը։

* * *

Ամենէն վսեմ մտածումները բան մը չեն, եթէ գէշ կերպով բացատրուին։

* * *

Հարիւր մարդուն մէջ ինսնսունը կը զոհեն ապագային բոլոր յոյսերը ներկային հաճոյից։

* * *

Համարձակութիւնն ինքնին բարի է, բայց իւր սահմանապանցութիւններն ունի։

* * *

Հաճոյք՝ ծաղիկներ են կենաց փուշերուն մէջ ցանուած, բայց պէտք է ինամով քաղել զայնս, քանզի անոնց գեղեցկութիւնը վաղաթառչամ է։

* * *

Գիտութիւնք դառն արմատներ ունին, բայց անոնց պտուղները քաղցր են։

* * *

Թիղճը շատ անգամ դահիճ մնէ. իսկ դուքը աղատարար։

* * *

Աշխարհի մէջ հանճարներ չեն պակսիր, բայց փոքրոգութիւնն ու նուաստութիւնը կը պաշարեն և կը խղդեն զանոնք։

* * *

Իրաւամբ ըսուած է թէ տղայք անգութ են, զի շատ պարագայներու մէջ մեր մեղութիւններն կը յիշեցնեն մեզ։

* * *

Մեծ ու գեղեցիկ խորհուրդները սրտէն կուգան։

* * *

Զար օրինակներ կան որ մեծ ոճիրներէն գէշ են։

* * *

Ցայտնի թշնամին չողոքորթէն քիչ վտանգաւոր է։

* * *

Օր մը, ժամ մը, վայրկեան մը բաւական է շատ անգամ մարդու մը երջանկութիւնն կամ թշուառութիւնը վճռելու համար։

* * *

Պատմութիւնը թատրոն մ'է՝ ուր քաղաքականութիւնը, ինչպէս նաև բարոյականութիւնը դործնականապէս ի հանդէս կ'ածեն։

* * *

Դժուարին է կատարեալապէս ճանաչել ըզմարդիկ, զի մեծագոյն մասը, տնկոց նման, այնպիսի թագուն առաքինութիւններ ունին, զորս դեպքը միայն կընայ ի վեր հանել։

* * *

Աւեն մարդ մէկ մէկ տեսակ խենթ է, բայց է պօալօ, որք առաւել կամ նուազ տարբերութիւն ունին իրարմէ։

* * *

Ուղղը վիհէն ցամքկեցնողը՝ բուռ մը խոտըն է։

* * *

Խարեբայ մարդիկ չատ անդամ դէշ յիշատակներ կ'թողուն խելացի անձանց մտաց մէջ; ինչպէս դժուարամարս կերակուրը դէշ համ մը կ'թողու ստամոքսին մէջ։

* * *

Մինչև երեսուն տարին մարդ պէտք է մարմնով ապրի, երեսունէն քառասունը՝ սրբոտով, անկէ ետքը մտքով։

ԽՆԴԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԼՈՒՐԵՐ

Շարիվարիէն

«Սպանիոյ թագաւորը չատ բազդաւոր է որ պապին բարեկամութիւնը կրցեր է վաստկիլ։

Տօն Քարլօս հիմայ պրկունքները պիտի խածնէ որ ժամանակաւ ինքը կեանքը վտանգի մէջ դնէ աստուածպետական իրաւանց յաղթանակին համար, և հիմայ ծայրագոյն քահանայապետը ղինքը լքանէ ու իր հակառակորդին առատաձեռնութիւններ ընէ։

Լէոն ԺԳ. պապը Սպանիոյ Ալֆոնս ԺԲ. արքային օրհնեալ գօսյները ղրկեր է որ Լուգոյհին մէջքը կապէ որպէս զի ծննդաբերութենէն անվտանգ և յաջողութեամբ ազատի։

Պապը չը վախնար որ այսպիսի ընծայ մը ընելով ինքզինքը վտանգութեան մէջ կ'ձգէ։

Եւ սուտ, եթէ թագուհին դէշ կամ վտանգաւոր ծննդաբերութիւն մ'ընէ, ազատահոգը անպատճառ պիտի ըսեն թէ պապին օրհնութիւնը դէշ տեսակէն էր։

Այն ատեն Լևոն ԺԳ. ալ պիտի տեսնէ որ վատիկան դիմողներուն թիւը երթալով կը պակսի կոր իրեն օրհնութիւնը հայցելու, օրհնութեանը վրայ կասկածներ ծնած ըլլալուն։

Իսկ եթէ այդ ընծայն կատարեալապէս յաջող ազդեցութիւն մ'ունենայ, այն ատեն Ծայրագոյն քահանայապետէն օրհնուած ծննդաբերութիւնները ժամանակիս մօտայլ կարգը պիտի անցնին։

Այն ատեն եկեղեցեաց մէջ, լուսարարը՝ օրհնեալ ջրոյ աւազանին քովիկը ծանուցման տախտակ մը պիտի կախէ վրան սա վերտառութեամբը,

ԿԸ ԾԱԽՈՒԻ

Լեան ԺԳ. ԵՒ օրհնեալ ծննդաբերութենէն

քաշուելու տեղը

(Դիմել ի պահարանն)

Իրլանտիոյ Լուրտ քաղաքին հրաշագործ վանքը ուխտի երթալով բժշկուողներէն մէկն ալ՝ Բարիզի եկեղեցեաց մէկուն դուռը մուրացող աղքատ մը եղած է։

Այս մուրացկանը աչքի ցաւ մ'ունենալով. դրեթէ կէս կոյր մը դարձած էր։

Հիմայ բժշկուած ետ դառնալով նորէն իր առջի արուեստը գործադրելու կսկսի։

Բայց հիմայ եկեղեցիէն եկնողները ողորմութիւն չեն իտար իրեն, ըսելով թէ առողջ է կրնայ աշխատիլ։

Մարդը ասոր վրայ կ'զգայ ուխտի երթալուն, և կըսէ թէ՝ բարով խերով Լուբատ չէի գացեր, աչքիս լոյսը գտայ թէպէտ՝ բայց ձեռքի վառատակս կորնցուցի։

—

Իթալի թերթը կ'պատմէ թէ Իտալիոյ Ռօրթագօմարթօ գիւղը կով մը հրէշ հորթ մը ծներ է որ ունի եղեր երկու գլուխ, երեք բերան, երեք աչք և չորս ոտք. հորթը մորը կաթը ծծելու համար, մերթ ալ կողմի բերնովը, մերթ ձախ կողմի և կամ մէջ տեղի բերնովը տալնքը կառնէ, և ալ առողջութիւնը տեղն է եղեր։

—

Ա.Հաւասիկ առօրեայ ժամուց փոքրիկ յոյցակ մը, որուն համեմատ տղայք ըստ իրեանց հասակին, պարտին քնանալ, մարմնամարզել, աշխատիլ և ըրօսնուլ։

Ա.յս ցուցակը, ղոր Գերմանացի ականաւոր բժիշկ մը յօրինած է, կը պատշաճի 7էն 15 տարեկան այն երկսեռ մանկանց, որք կանոնաւոր կացութիւն ունին։

Ուստի անօգուտ չեմք համարիր յառաջ բերել զայն, և ծնողաց ու դաստիարակաց ուշադրութեանը յանձնել։

հասակ	քուն	մրմնմրզ.	աշխատ.	ըրօս.
7 տար.	9 ժամ	9 ժ.	2 ժ.	4
8	9	9	2	4
9	9	8	3	2
10	8	8	4	4
11	8	7	5	4
12	8	6	6	4
13	8	5	7	4
14	7	5	8	4
15	7	4	9	4

ՋՈՒԱՐՃԱԼԻԿ

Հրէշատակի դեղեցկութիւն ունեցող փոքրիկ օրիորդ մը բոլոր գինքը տեսնողներուն հիացման առարկայ եղած էր, և ընտանեբար ամեն մարդ. ղայն կը սիրէր և կը համբուրէր։

Ա.յս բանը վերյատկէս իրեն ձանձրոյթ պատճառելով, օր մը ըսաւ,

—Երբոր մեծնամ նէ, այնքան գիւրաւ ամեն մարդու համբոյր չպիտի տամ։

* * *

Քանի մը որսորդներ Ամպարլը երթալով, դեղացիին մէկուն կ'հարցնեն թէ.

—Ա.յս տարի պլոբրճին կ'ինձա՞յ կոր ինչպէս է,

—կ'ինձայ կոր թէչ թիւչ ամա՝ չատ ուղ է,

—ինչո՞ւ համար,

—Ա.յս տարի եկող որսորդներուն ամենքն ալ լեռները պարտելու չհամարձակելով, ուսերով կ'պտնեն ու անանկ ետ կ'դառնան կոր։

* * *

Ընդհատ օր աղգային վարժարաններէն մէկուն մէջ, մանկավարժ մը հետևեալ հարցումը կընէր աշակերտի մը։

—Տիրան, դիմումիւնը ի՞նչ ըսել է։

Տղան զարմանալի լուռթիւն կը պահէ։ վարժապետը զայրանալով այնպիսի կերպով մը տղուն ականջը կ'ոլորէ որ տղան կ'սկսի բարձրաձայն լալ, իսկ մանկավարժը հարցումը կը կրկնէր,

—Հը՛, հը՛, հը՛, կըսէ տղան լալով. գըթութի՛ւն . . . դուք անգամ, միւսիւ, ատոր նշանակութիւնը չէք գիտեր կոր. որովհետև եթէ գիտցած ըլլայիք. ականջս այնքան անլսընայ չէիք քաշեր։

* * *

Ո՛ւրկէ կուգաք, միւսիւ.

—Մարդիւղէն.

—Ի՞նչպէս, դիւղերնուս հասնեցա՞ք.

թեան, իր անձնանձիւր աշխատութեամբը կանոնել ինքզինքը արժանի ընելու միշտ Ն. Բարձր արքայութեան հովանաւորութեանը։

——

Հինդշաբթի գիշեր Պէօյիւքտէրէի թատրոնը, ի նպաստ տիկին Լուանակ գուսանական դերասանուհւոյն, Էմիլէպիճի անուն օբերէթը ներկայացուեցաւ։

Տիկին Լուանակ խիստ յաջողակ և փայլուն կերպիւ կատարեց իր դերը, այնպէս որ բազմաթիւ հանդիսականաց կողմանէ ատէպ ատէպ եռանդուն և բուռն ծափահարութեանց արժանացաւ։

——

Ա.յս շաբթու քանի մը նշանաւոր և ցաւալի կորուստներ ունեցանք։

Տօքթօր Քեաթիպեան էֆէնտիի եղբայր, կարապետ էֆէնտի Քեաթիպեան այս երեքշաբթի օր կնքեց իր մահկանացու ընթացքը, առաքինի և բարեկիրթ զաւակներ թողլով։ Հանգուցեալին մարմինը պարզ հանդիսիւ Ֆերիքէօյի գերեզմանատունը թաղուեցաւ։

Ֆէնէրճեան մեծապատիւ եղբարց Յակոբի հայրն Մարտիրոս աղա Ֆէնէրճեան հինգշաբթի օր 81 տարեկան ալեւոր հասակաւ առ Աստուած փոխեցաւ, երէկ առաւօտ ի հանդիստ հոգւոյ հանգուցեալին Մայր եկեղեցւոյ մէջ Ս. Պատարագ մատուցուեցաւ յետոյ, եւ իւրոյին ալ յուղարկաւորութեան հանդէսը կատարուելով մարմինը հանդիսիւ Պալըքլը-ի գերեզմանատունը փոխադրուեցաւ. ի ներկայութեան բազմաթիւ և պատուաւոր յուղարկաւորաց։

Հանգուցեալ Մարտիրոս աղան երեք աղջիկ և երկու աղջիկ զաւակ կ'թողու ուսեալ և բարեկիրթ, որոց երիցագոյնը Յովակիմ էֆ. Ֆէնէրճեան այսօր Ս. Փրկչի Հիւանդանոցի հոգաբարձութեան պաշտօնին մէջ դանուելով, ամեն կերպով և աշխատութեամբ ազգին ծառայելու վրայ կ'գանուի։

Բարեյիշատակ հանգուցեալոց ընտանեաց ու դերդաստանին յատկապէս մեր անկեղծ վշտակցութիւնը հրապարակաւ պարտք կ'համարիմք յայտնել։

——

Քաղ. խորհուրդներն որոնք իւրաքանչիւր թաղի ազգային և ընտանեկան գործերն ու խնդիրներն կարգադրելու և խաղաղեցնելու պաշտօնն ունին, ընդհակառակն մեկ քանի ընչանաւոր թաղերու թաղ. խորհուրդներ կան որոց անդամները չարունակ իրարու հետ գործութեան և երկպառակութեան վիճակի մէջ կ'գտնուին, ատոնց վրայօք ուրիշ առթիւ մանրամասնօրէն պիտի խօսինք։

ԾԱՂՐԱՓԱՂ

Ա.մանութիւն.—Գէտք մը աղքատաց հասար. կապ մը գիւրակաց եղողներուն համար, իսկ արգելք մը հարուստներուն համար։

Կղեր.—Խաւարի մէջ լոյս բնաբուղ ջիմիադէտներ։

Ոստիկանութիւն.— Փողոցներու գլուխը դրուած կազի լապտերներ՝ որոց ապակիները կարած են։

Սիրահարութիւն.—Երկու կառախառնբրու իրարու դէմ ընդհարումը, որոյ մէջ կառավարիչներուն մեկը անպատճառ պիտի խոցոտուի։

Երջանկութիւն.—Ուղն ու մտածել հաչիւ ընողը պօրանի չկրնալ ուտել։

Հանդէս.—Կեղևէն նոր դուրս եկած ընկուզամէջ (ճէվիզ լէյի), որոյ սպիտակութիւնը հետեւեալ օրը անպատճառ սեւի կ'փոխուի։

Տիգրանակերտ 20 օգոստ. 80

Խմբագրապետ Տէր ,

Մասիսի պատուական թերթերուն 2651 թուին մէջ տեղւոյս Բողոքականաց պատուելի Թովմաս Պօյաճեանի նկատմամբ գրուածները՝ և միւս թերթերուն 2658 թուին մէջ նորին եղբօր Պ. Յակոբ Պօյաճեանի հերքումը կարդացինք , որն որ առանց իրաւացի վհատերու իւր եղբօր քաղաքիս մէջ լուսարարութեան և ժամակոչութեան պաշտօն վարելու իրականութիւնը և պատ. Թ. Պօյաճեանի 50-55 տարեկան լինելը կ'մերժէր , կամ լաւ ևս է ըսել , կուրանար ։

Ուստի Տէր Խմբագիր , այդ խնդրոյն վերյայօք ի մեզ տեղեկութիւն ունենալով պարտ անձին կ'համարիմք ստուգելով ճշմարտութիւնը երևան հանել առանց կողմնակալութեան . Ա.Հաւասիկ ։

Քաղաքիս Ս. Սարգիս եկեղեցւոյ թաղիս մէջ 40 տարիէ ի վեր վարժապետութիւն ընող Շեկոյ Խալֆան կը վկայէ թէ իւր վարժապետութեան նոր մտած միջոցին իրեն աշակերտեր է Պատ. Թովմաս Պօյաճեանը 10 –15 տարեկան հասակաւ , և դպրոցէն ելլելէն ետքը նոյն թաղին եկեղեցւոյ լուսարարութեան պաշտօնը(*) վարած է ։ Երբ գինքը պաշտպանող իւր եղբայր Յակոբը Ղարոյեանց դերձակ Թովմասի քով աշակերտութիւն կընէր , իւր վարպետը՝ դերձակ Յարութիւննանց Մ. . կարապետին հետը ընկերացած միջոցին՝ Պատ. Պօյաճեանն իւր ստահակութեանն և ապօրինի ընթացքին համար լուսարարութենէն պաշտօնանկուելով՝ դերձակութեան արհեստին ձառայելու կերթայ , որչափ որ աղաչած է իւր վարպետներուն գինքը լուսարարութեանն պաշտօնին մէջ վերահաստատուելու համար , չէ յաջողած , եթէ գինքը մուսյեր է , որու որ աղաչեր է , անոնք տակաւին ողջ են ։

Պատուելի Պօյաճեանի հայատեցութեան և անդրիմանալութեան ընդհանրոյս ձիրքերը Տիգրանակերտի ամեն ողջամիտ ազգայիններուն ծանօթ լինելով՝ որոյ նկատմամբ խօսիլ աւելորդ կ'համարիմք , երկար էջերու կը կարօտի մանրամասնաբար ապացուցանելու համար , հետևաբար լրագրաց մէջ նորին հակազդային ընթացից վրայօք գրուածները գրեթէ հարիւրէն մէկն է ։

Ուստի լաւ կ'լինէր եթէ Պ. Յակոբ Պօյաճեանը նոյն իսկ բողոքական ազգայիններէն տեղեկանալէ գինքն՝ իւր եղբայրը պաշտպանելու համար ասպարէզ իջնէր ։ Ըստ մեզ մեծ անպատուութիւն է , այնպիսի պատուաւոր անձ մը չգիտցածը գիտցածի պէս խօսիլ և առանց ապացուցեալ փաստերու պնդել , և կամ թէ հակառակ իւր խղճին թիւրիլ կամ ստել ։

Որոյ վասն , խմբագրապետ Տէր . Ներկայիս սոյն նամակիս Ձեր պատուական թերթերուն մէջ անկիւն մը չնորհել բարեհաճիք ։

Մնամ յարգանօք Ձեր Մեծապատուութեան

***

(*)Ակամայ դիտալու է որ նոյն եկեղեցւոյ լուսարարը մինչև յայսօր ժամակոչի կէս պաշտօնը իւր վրան է , ինչպէս Աւագնորդարանը եկող հիւրերուն սուրճ եփել և սպասաւորել , ի հարկին մարդ կանչել , և քահանայից ամենայն կերպիւ սպասաւորել , ժամակոչին կը մնայ միայն մեռեալները թաղել , զոր լուսարարը չըներ ։

Ա Զ Դ

Թատրուղի Մ. Ներսիսեան վարժարանի հոգաբարձութիւնը կ'ծանուցանէ թէ դպրոցին համար մանկավարժներու պէտք ունենալով , յօժարութիւն ունեցողը կրնայ դիմել Հոգաբարձութեան ամեն օր մինչև ժամը 4 ի խորհրդարանն եկեղեցւոյ ։

ԽՄԲԱԳԻՐ ՏՆՕՐԷՆ

ԳԷՈՐԳ Յ. ԱՅՎԱԶԵԱՆ